Լծեմ իմ լծկանք դաշտերը հերկեմ՝
Դուլթանիս մաճից բռնելով երգեմ.
Զեմ նախանձիլ ես արհեստաւորին,
Կամ թէ շատերի կեղծ առևտուրին . . . .

—

Որք ամբողջ օրը սուտ երդումներով՝
Մ--ղ--ր-ի գրաւում քաղցր խօսքերով.
Եւ ո՛չ դ-ե-ի մեծ աղաներին,
Որոնք գերի են իւրեանց շահերին . . . .

—

Իսկ ես ազատ եմ այդ ամենից էլ,
Այդ իմ պապ մաճկալ՝ ինչ չէ՞ աւանդել,
— Այլ կանաչ դաշտում քրտինքներ թափել,
Եւ ամբողջ ձմեռ՝ հանգի՞ստ վայելել.

Դ--ղ--ր ՆԵՐՍԷՍ ՄԱՏ. Տ ԱԻԵՏԻՔԵԱՆՑ:

ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Ս. Էջմիածնի ամենայն Հայոց Կաթուղիկոսական Տեղակալ Մակար Արքեպիսկոպոսը Բարձրագոյն հրաւիրանաց համաձայն Ապրիլի 14ին ժամը 2ին յետ կէսաւուր Մայր Աթոռէս ուղեւորեցաւ ի Մոսկուա Կայսերական թագադրութեան հանդիսին ներկայ գտնուելու համար։ Նորին Սրբազնութիւնը ուղեւորելուց յառաջ Միաբանական Ուխտի հետ միասին այցելեց Գ. Ճեմարանին։ Ցարգելի Ուսուցչաց խումբը և Ճեմարանի սաները Նորին Բարձր Սրբազնութեանն ընդունեցին Հանդիսարանի մէջ քաղցր ու ներդաշնակ երգեցողութեամբ։ Նորին Բարձր Սրբազնութիւնը իւր առաժամանակեայ հրաժարականը և ինչ ինչ կարևոր խրատներ ամենին աւանդելուց յետոյ՝ Ուսուցչաց, Ուսանողաց և Միաբանական Ուխտի ուղեկցութեամբ ելաւ Ճեմարանից և նստաւ իւր կառքը, որ սպասու	եր Ճեմարանի հիւսիսային դրան առաջ Ոստիկանութեան և Վաղարշապատի երիտասարդաց բազմաթիւ ձիաւորների հետ միասին։ Միաբանութեան կողմից Նորին Բարձր Սրբազնութեանն ուղեկցեցին մինչև Երևան Գեր. Մեսրոպը և Ներսէս Եպիսկոպոսունքը և Բարեշ. Սարգիս Վարդապետ Տ. Գասպարեանցը։

Կցանկանք Նորին Բարձր Սրբազնութեան բարի ճանապարհ և անվտանգ վերադարձ։

—

Նորին բարձր Սրբազնութեան Մակար Արքեպիսկոպոսի և Ս. Սինոդի Սրբազան Ատենակալաց բարեհաճ կարգադրութեամբ Մայր Աթոռոյս Տեղապահ կարգեցաւ Գերապատիւ Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսը։

Նորին Բարձր Սրբազնութեանը կցանկանք տոկուն և արդիւնաւոր գործունէութիւն իւր ներկայ բարձր պաշտօնի ասպարիզում։

—

Ապրիլ 17-ին Զատկի տօնին Նորին Բարձր Սրբազնութիւն Տեղակալ Մկրտիչ Արքեպիսկոպոս Բաբաջանեան՝ բարեհաճեցաւ ընդունել Վեհարանի սենեակներից մէկի մէջ Ս. Էջմիածնի ամբողջ Միաբանութիւնը, Ճեմարանի Վարչութիւնն և Սանուները, նոյնպէս և Վաղարշապատի տեղական կառավարութեան պաշտօնակալներն և գիւղի հասարակութեան գլխաւոր անդամները, առանձին առանձին խրախուսիչ և խրատական խօսքերով շնորհաւորեց նորանց Քրիստոսի Ս. Յարութիւնը։

Նորին բարձր Սրբազնութեան խօսքերից նշանաւորն է Ճեմարանի աշակերտաց խօսած յորդորն և խրախուսանքն ի ներկայութեան Ս. Սինոդականաց և Միաբանութեան, ասաց «Սիրելի որդեգիրներ Ս. Էջմիածնի, գիտեմ, շատերդ ցանկանում էիք այսպիսի հրաշալի տօնին Ձեր հայրենեաց և Ձեր ծնողաց գրկում լինել, սակայն Ձեր ուսման փափագն չափաւորում է Ձեր ցանկութիւնը, և բաղդաւոր է համարում Ձեզ մեղրական ժրաջանութեամբ շտեմարանել հանգուցեալ Հայրապետի պատրաստած մեղրանոցում և ծաղկալից պարտիզում Ձեր մտաց փեթակների մէջ քաղցր մեղր և մոմ ըստ նպատակի Նորին Հանգուցեալ Վեհ. Հիմնադրի, Ձեր շտեմարանած մեղրով քաղցրացնել ազգայնոց քիմքը և մոմովն լուսաւորել Հայաստանի խաւար վայրերն ի պարծանս Ս. Էջմիածնի և ազգիս. այո՛, վստահ եմ որ դուք ամենքդ կը ջանայք պսակել Վեհ. Հիմնադրի և Ազգիս նպատակն Ձեր բարեկրթութեամբ և ուսմամբ, փոխադարձ և Դուք վստահ եղէք սիրելի որդեգիրներ, որ ես աջակցութեամբ իմ Սրբազան եղբարցս, պիտի աշխատեմ նոյն բարեկարգութեան և յառաջադիմութեան մէջ պահել Ճեմարանը նիւթականապէս և բարոյապէս։ Յարուցեալ Փրկիչն Յիսուս՝ թո՛ղ կարողութիւն շնորհէ մեզ և Ձեզ և Ձեր բարեջան ուսուցչաց, կատարել մեր սրբազան պարտականութիւններն ամէն»։

Ճեմարանի Սանուները և բոլոր հանդիսականք համբուրեցին Նորին Սրբազնութեան Ս. Աջը և վերջացաւ այս ախորժ հոգևոր հանդէսը։

—

Ս. Սինոդի կարգադրութեան համաձայն Գերապատիւ Պարզեանց Սուքիաս եպիսկոպոսը նշանակեցաւ Աստրախանու թեմի հոգևոր կառավարիչ։

Ս. Սինոդի կարգադրութեան համաձայն Ախլցխայի Ճաջորդ Գերապատիւ Սաղինեանց Գրիգոր Արքեպիսկոպոսը նշանակուեցաւ Ղարաբաղու թեմի կառավարիչ. իսկ ի տեղի Նորին Սրբազնութեան Ախլցխայի Ճաջորդ նշանակեցաւ բարեշնորհ Մամբրէ վարդապետ Սանասարեանց։

—

Ս. Սինոդի կարգադրութեան համաձայն բարեշնորհ Գրիգոր վարդապետն Գառնակերեանց կարգեցաւ Տփխիսու Ս. Սարգիս վանուց վանահայր, որ և ամսոյս 2ին ուղևորեցաւ իւր պաշտօնավայրը։

—

Ս. Սինոդի կարգադրութեան համաձայն Նորատունկեան բարեշնորհ Ցակովբ վարդապետն կարգեցաւ Հռոմոսի վանուց վանահայր։

—

Նորին Սրբազնութիւն Անդամ Ս. Սինոդի Գրիգոր եպիսկոպոսը Ապրելի 30ին իւր հայրենիքից վերադառնալով Երևան, հետևեալ օրը այնտեղից ուղղակի ուղևորուել է՝ ի Տփխիս անտի արտասահման անցնելու, իւր անձնական հիւանդութեան բժշկութիւն գտնելու համար։

Նորին սրբազնութեանը կցանկանք բարի ճանապարհ և ողջամբ վերադարձ։

—

Նոր — Նախիջեւանցի մեր յարգելի Ազգայիններից, ոմանք նուիրեցին յօգուտ ճեմարանի Մայր Աթոռոյս՝ հարէ-ը յէոն ը-էլէ (150), որոց անուններն ու իւրաքանչիւրոց նուիրանաց քանակութիւնը հրատարակելով Արարատիս մէջոցաւ՝ յայտնում ենք հրապարակական շնորհակալութիւն գովելով նոցա եռանդը ազգային լուսաւորութեան գործում։

	Ռուբլի
Սուքիաս եպիսկոպոս Պարզեանց	25
Խաչատուր Աւագ քահանայ Զարիֆեանց . . .	25
Պետրոս վարդապետ Այվազեանց	25
Ուսուցիչք Հոգևոր դպրոցին	25
Խաչատուր Սիրականեան	10
Համբարձում Առաքելեան	10
Խաչերէս Սարգսեան Սատէթեանց	10
Ցովհաննէս Միքայելեան Տրապզուցեանց . . .	10
Ցովհաննէս քահանայ Տէր Սիւէօնեանց . . .	10
Գումարն է	150

—

Նամախարնակ մեր սիրելի Աղգայինք ոմանք յօգուտ Մայր Աթոռոյս Գէորգեան ձեմարանի նո իրեցին 125 բուբլի, որոյ անուանքը նուիրանաց քանակութեան հետ միասին հրատարակելով, յայտնումենք նոցա մեր խորին շնորհակալութիւնը:

		Բուբլի
Գէորգ Յովհաննիսեան Քեալանթարեանց	. . .	25
Գրիգոր քահանայ Յովսէփեանց	. . . . .	10
Գէորգ Տէր Յովհաննիսեանց	. . . . .	10
Սահակ քահանայ Յօնանեանց	. . . . .	10
Յովհաննէս Պետրոսեան Իւզբաշեանց	. . . .	10
Աբրահամ Գասպարեան Հ. Բաղդասարեանց	. . .	10
Բաղդասար Նազարեանց	. . . . .	10
Յովհաննէս Խալատպեանց	. . . . .	10
Դաւիթ Եսայեան Գէորգեանց	. . . . .	10
Համազասպ վարդապետ Համազասպեանց	. . . .	10
Պօղոս Մովսիսեան Ներսիսեանց	. . . . .	10
Գումարն է		125

—

Երեւանայ թեմ. դպրանոցի վարչութեան խնդրանաց համաձայն հրատարակումենք յիւեալ դպրանոցի մտից եւ ծախուց համառօտ հաշուեցակը, սկսեալ ի 23-էն Յուլիսի 1879 ամի ցլ-ն Յունվարի 1883 ամի:

ՄՈՒՏՔ 1879 Յուլիսի 23

	Ռուբ.	Կ.
Նախկին գանձապահէն առանձին ստորագրութեամբ ստացեալ դրամագլուխ . . .	10106	31

Ի 23 էն Յուլիսի 1879 -ի ցլ-ն Սեպտեմ. 1880 -ի ընթացքում

Մոմավաճառութիւնից	1734	
Մետրիքական վկայութիւններից . . .	948	20
Աշակերտաց թոշակագրամ	3486	
Նուէր պսակներից	211	90
Յոկոսիք դրամագլխի	730	50
Նուէր յօգուտ գրադարանի	104	
Նուէր զանազան անձինքներից . . .	270	
Արդիւնք ուխտատեղեաց	35	

Սահականուշեան Օր. դպրոցից ռոճիկ ուսուցչաց.	500	
Մուտքի գումարն է		18095 91
Մնացորդ դրամ առ 1 ն Սեպ. 1880 ամի	6587 70	

Մուտք է 1-ն Սեպտեմ. 1880-դ յ1 Սեպ. 1881-դ.

Աշակերտաց թոշակադրամք	2301	
Մետրիքական վկայութիւններից	841 68	
Տոկոսիք դրամագլխի	557 60	
Նուէր զանազան անձինքներից	925	
Մոմավաճառութիւնից	1227 32	
Տոկոսեօք տուեալ դրամից	470	
Նուէր Պսակներից	20	
Արդիւնք ուխտատեղեաց	209 4	
Սահականուշեան Օր. դպրոցից ռոճիկ ուսուցչաց.	50	
Մուտքի գումարն է		13789 34
Մնացորդ առ 1 ն Սեպտեմբերի 1881 ամի	5383 28	

Մուտք է 1 ն Սեպտեմ. 1881-դ յ1-ն Սեպ. 1882-դ.

Աշակերտաց թոշակադրամ	2231	
Մետրիքական վկայականներից	1040	
Նուէր պսակներից	104 50	
Նուէր զանազան անձինքներից	290	
Պարահանդէսից	200	
Մոմավաճաւութիւնից	875	
Վիճակախաղից	162 26	
Արդիւնք ուխտատեղեաց	25	
Մուտքի գումարն է		10811 4
Մնացորդ առ 1 ն Սեպ. 1882 ամի	3512 19	

Մուտք է 1 Սեպտեմ. 1882-դ յ1 Սեպ. 1883-դ.

Մետրիքական վկայականներից	350	
Աշակերտաց թոշակադրամ	1537	
Նուիրադրամ	50	
Տոկոսիք	110	
Մոմավաճառութիւնից	394	
Եկեղեցիներից	200	
Նուէր պսակներից	86 20	
Մուտքի գումարն է		6239 39

Մնաց առ 1 ն Յունվարի 1883 ամի . .	3917 73
Մոմավաճառութեան խանութ մուտի . .	1400
Ստանալիք տոկոս ունի	1000
Առ 1 ն Յունվարի 1883 ամի գումարն է	6317 73

Բաց յայտնէ

Քաղաքիս հինգ Եկեղեցիներից ստանալիք արդիւնք ևս կայ, համաձայն տնօրէնութեան հանգուցեալ Ա. Եր. Կաթուղիկոսի և հրամանագրութեանց Ս. Սինոդի գրեալ ի 19 ն Նոյեմբերի 1876 ամի, ի 4 ն Յունվարի 1878 ամի, ի 18 ն Դեկտեմ. 1880 ամի № № 2648, 31 և 4966. յատկացրած է թեմական դպրանոցիս պահպանութեանը համար որպէս նպաստ մի որոշ արդիւնք.—այն է մինչ դպրանոցիս Հոգաբարձութեան ձեռամբ եկեղեցեաց դրամագլխների հաշուատեսութիւնը, պէտք է Ս. Յովհաննէս, Ս. Պօղոս—Պետրոս և Զօրաւոր եկեղեցիներն վճարէին տարեկան 290 ական ռուբ. Ս. Սարգիս եկեղեցին 170 ռուբ. իսկ Ս. Կաթուղիկէ եկեղեցին 100 ռուբ. բայց հաշուատեսութիւնից յետոյ կայացած դրամագլխի տոկոսը. նոյն հրամանագրութեանց համաձայն, պէտք է շարունակարար ստանայ թեմական դպրանոցս. ըստ այսմ.—

1. Ս. Յովհաննէս եկեղեցին 1877 թուի Յունվարի 1 ից մինչև 1881 թուի Յունվարի 1-ն այսինքն չորս տարուայ ընթացքում. պէտք է վճարէր տարեկան 290 ական ռուբ. որ կլինէր գումարը 1160 ռուբլի. իսկ 1881 թուի Յունվ. 1-ից մինչև 1883 թուի Յունվարի 15 պէտք է վճարէր 7551 ռուբ. և 66 կոպ. դրամագլխի տոկոսը. որը 6% հաշուելով, կլինի տարեկան 453 ռուբ. 6 կոպ. ուրեմն երկու տարուայ ընթացքում եղել է 906 ռուբ. 12 կոպ. բարդելով այս գումարին վերոյիշեալ 1160 ռուբ. ևս, գումարը կլինի 2066 ռուբ. 12 կոպ. որից հոգաբարձութիւնս ստացել է միայն 530 ռուբ. այժմ մնում է ապառիկ նոյն եկեղեցւոյ վերայ 1536 ռուբլի 12 կոպէկ. . . 1536 12

2. Վերոյիշեալ կարգաւը Ս. Պօղոս և Պետրոս եկեղեցւոյ վերայ՝ մնում է ապառիկ . . 1013 75

3. Ս. Զօրաւոր եկեղեցւոյ վերայ՝ . .	1522 64	
4. Ս. Սարգիս եկեղեցւոյ վերայ՝ . .	588	
5. Ս. Կաթուղիկէ եկեղեցւոյ վերայ՝ . .	661	
Գումարն է .		11039 24

ԾԱԽՔ 1879 Յուլիսի 23

Ծ-խ. ի 23-ն Յ-ուլ-ի 1879-դ յ1 Սեպտ. 1880-դ.

	Ռուբ.	Կ.	Ռուբ.	Կ.
Ճանապարհածախք ուսուցչաց . . .	130			
Ռոճիկք ուսուցչաց յընթացս 14 ամսուան .	8253	92		
Գրագարանի համար գնեալ իրեղէնք . .	250	60		
Արևելեան պատի շինութեան . . .	1190			
Ծախք վերանորոգութեանց, մանր իրեղինաց, նստարանաց, վառելափայտից և աթոռների .	510	66		
Ճանապարհածախք թեմական Տեսչի . .	130			
Պարգևադրամ պ. պ. Բէգ Նազարեանցին և Տէր Մկրտչեանցին	270			
Ցոկոսեօք տուեալ	600			
Ի վերայ զանազան թերութեանց դպրանոցի .	2	3	3	
Ծախքի գումարն է			11508	21

Ծ-խ. ի 1-ն Սեպ. 1880-դ յ1 Սեպտ. 1881-դ.

Ռոճիկք ուսուցչաց	7592	6		
Մանր ծախք	314			
Ծախքի գումարն է			7906	6

Ծ-խ. ի 1-ն Սեպտ. 1881-դ յ1 Սեպտ. 1882-դ.

Ռոճիկ ուսուցչաց	6999	8		
Մանր ծախք և վառելափայտ . . .	299	77		
Ծախքի գումարն է			7298	85

Ծ-խ. ի 1-ն Սեպտ. 1882-դ յ1-ն Յ-ունվ-ի 1883-դ.

Ռոճիկ ուսուցչաց	2132	92		
Մանր ծախք և վառելափայտ . .	188	74		
Ծախքի գումարն է			2321	66

Գանձապահ թեմական դպրանոցի Պօղոս Պօղոսեանց